



# ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 3901-Ա

« 10 » հոկտեմբերի 2024 թ.

ՀԱՂԹԱՆԱԿԻ 44-ՐԴ ՏԵՂԱՄԱՍԻ Հ.6 ՀԱՍՅԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ  
ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վարչական ակտի ընդունման համար հիմք է հանդիսացել Կարապետ Աբրահամյանի, Լենա Ոսկանյանի, Անի Ստեփանյանի լ/ա Խաչատուր Աբրահամյանի դիմումը՝ Հաղթանակի 44-րդ տեղամասի հ.6 հասցեում գտնվող, բաժնային սեփականության իրավունքով Խաչատուր Աբրահամյանին, Կարապետ Աբրահամյանին, Լենա Ոսկանյանին և Անի Ստեփանյանին պատկանող հողամասի (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.07092023-01-0218 վկայական) նպատակային և գործառնական նշանակությունները փոխելու մասին:

Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի սեպտեմբերի 10-ի հ.204-Ն որոշմամբ հաստատված Երևան քաղաքի գլխավոր հատակագծի համաձայն՝ քննարկվող հողամասը գտնվում է բնակավայրերի նպատակային նշանակության /կատեգորիայի/ խառը կառուցապատման գոտում:

Ղեկավարվելով հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 4-րդ, 5-րդ մասերով և 10-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 49-րդ հոդվածով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 3-րդ, 53-րդ, 59-րդ և 60-րդ հոդվածներով, «Քաղաքաշինության մասին» օրենքի 14.3-րդ հոդվածի 12-րդ մասով, հիմք ընդունելով Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի սեպտեմբերի 10-ի հ.204-Ն որոշումը, հաշվի առնելով Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության 30.09.2024թ. հ.Դ-115786-24 եզրակացությունը.

1. Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի սեպտեմբերի 10-ի հ.204-Ն որոշմամբ հաստատված Երևան քաղաքի գլխավոր հատակագծի համաձայն՝ Հաղթանակի 44-րդ տեղամասի հ.6 հասցեում գտնվող, բաժնային սեփականության իրավունքով Խաչատուր Աբրահամյանին, Կարապետ Աբրահամյանին, Լենա Ոսկանյանին և Անի Ստեփանյանին պատկանող 223.36քմ մակերեսով հողամասի նպատակային նշանակությունը /կատեգորիան/ սահմանել բնակավայրերի, իսկ գործառնական նշանակությունը /օգտագործման նպատակը/ Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի հ.1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 24-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ բնակելի կառուցապատման:

2. Հողամասի նկատմամբ փոխված նպատակային և գործառնական նշանակությամբ իրավունքները ենթակա են պետական գրանցման ՀՀ կադաստրի

կոմիտեում՝ համաձայն կից ներկայացված նախագծման թույլտվության /ճարտարապետահատակագծային առաջադրանքի/:

3. Ընդունել ի գիտություն, որ սույն որոշման հիման վրա հողամասի նպատակային նշանակության փոփոխման իրավունքի պետական գրանցումը ենթակա է իրականացման այդ պահին հողամասի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային արժեքի տարբերության գումարը սեփականատիրոջ կողմից վճարված լինելու դեպքում:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն ստանալու հաջորդ օրը:

5. Որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

6. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման, ճարտարապետության և քաղաքաշինության վարչությունների պետերի վրա:

7. Որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է Երևանի քաղաքապետի առաջին տեղակալը:

**ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ**





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔ  
ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ  
(ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԶՍԱԿԱԳԾՍՅՐԼ ԱՌԱՋԱՐԴԱՔ)

N 01/18-01-3901-

« 1 » հունվարի 2024թ.

Օրյակ	Բնակելի տան կառուցման (օբյեկտի անվանումը, կառուցում, վերակառուցում, վերանորոգում, ուժեղացում, վերականգնում, գործառնական նշանակության փոփոխություն)
«Աշխատանքային նախագիծ» (ՀՀ կառավարության 19.03.2015թ. հ.596-Ն որոշման N 4 հավելված միջին ռիսկայնության օբյեկտ II կատեգորիա)	Մայրաքաղաքի փաստաթղթերի մշակման համար
Գտնվելու վայրը	Մայրաքաղաք-Սեբաստիա վարչական շրջան, Հաղթանակ 44-րդ տեղամաս հ.6 հողամաս (վարչական շրջանը, փողոցը, շենքի համարը, հողամասի ծածկագիրը)
Կառուցապատող	Խաչատուր Աբրահամյան, Գրառայետ Աբրահամյան, Լենա Ռակոնյան, Անի Ստեփանյան (պ. Երևան, Շերալի փողոց հ.111 շենք, հ.51 բնակարան, հեռ.՝ +374 95 70 41 45)
Առաջարկարմբի տրամադրման հիմքը	Կառուցապատողի հայտը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.07092023-01-0218 վկայականը, Երևանի քաղաքապետարանի 10.1 2024թ. հ. 390 -Ա որոշում, նախագծի էքսպերտիզային առաջարկը: (կառուցապատման նպատակով ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հողամասի տրամադրման, անշարժ գույքի փոփոխման իրավունքը հաստատող աներաժեշտ փաստաթղթեր)
Առաջարկարմբի գործողության ժամկետը	Մեկ տարի: (ՀՀ կառավարության 19 մարտի 2015 թվականի N 596-Ն որոշման N1 հավելվածի 31-րդ կետին համապատասխան)
Ն Ա Մ Ա Գ Ծ Վ Ո Ղ Հ Ո Ղ Ա Մ Ա Ս Ի Բ Ն Ո Ւ Թ Ա Գ Ի Ը (աստղանիշով (*) նշված դրույթների գրաֆիկական արտացոլումը տրամադրվում է կից ներկայացվող ամփոփ սխեմայով՝ Մ 1:500)	
1. Հողամասը գտնվում է	Նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ բնակելի կառուցապատման, գրանցված իրավունքի տեսակը՝ ընդհանուր բաժնային սեփականություն, կադաստրային ծածկագիր՝ 01-007-0129-0072: (հողամասի դիրքը քաղաքաշինական միջավայրում, դրա նպատակային և գործառնական նշանակությունը)
2. (*) Հողամասի չափերը	0.022336 հա: (հողամասի սահմանները՝ կոորդինատային նշանակմամբ, մակերեսը, (հա)
3. Հողամասի առկա վիճակը	Կառուցապատումից ազատ տարածք: (եզիբի բնութագիրը, շենքերի (այլ թվում՝ քանդակման երթուղի) առկայությունը (օգտագործումը, նշանակությունը, հարկայնությունը, շինարարական նյութերը և այլն), կանաչապատումը, բարելավումը և այլն)
4. (*) Տրանսպորտային պայմանները	Ներթափառյալի ճանապարհ: (ճանապարհների առկայությունը, երկաթուղային տրանսպորտի մոտեցումները և այլն)
5. (*) Ինժեներական ցանցեր և սարքավորումներ	Նախագծվող և կից տարածքներով անցնող ինժեներական գծեր և հաղորդակցողիներ: (ցամաքային էլեկտրական, կոմունալ, գազամատակարարման, տաք ջրի մատակարարման, էլեկտրամատակարարման, էլեկտրոնային հաղորդակցության համակարգեր)
6. (*) Կից հողամասեր	Բնակելի կառուցապատման համար նախատեսված հողամասեր: (կից հողօգտագործումների անվանումը և դրանց սահմանները՝ համաձայն ներկայացված սխեմայի)
7. Բնության հատուկ պահպանվող և (կամ) պատմամշակութային հուշարձանների տարածքներ (պահպանական գոտիներ)	Առկա չէ: (հուշարձանի անվանումը, կարգավիճակը և այլն)
8. (*) Հատակագծային սահմանափակումներ	Չկա: (տեղանքում գործող արտադրական, պաշտպանվող օբյեկտների, ինժեներատրանսպորտային ենթակառուցվածքների և այլ օբյեկտների նկատմամբ սահմանափակումները, այլ թվում՝ սերվիտուտները)
Ն Ա Մ Ա Գ Ծ Վ Ո Ղ Հ Ո Ղ Ա Մ Ա Ս Ի Բ Ն Ո Ւ Թ Ա Գ Ի Ը (աստղանիշով (*) նշված դրույթների գրաֆիկական արտացոլումը տրամադրվում է կից ներկայացվող ամփոփ սխեմայով՝ Մ 1:500)	
9. Ծարձարապետահատակագծային պահանջներ	Մշակել Մայրաքաղաք-Սեբաստիա վարչական շրջան, Հաղթանակ 44-րդ տեղամաս հ.6 հողամաս հասցեում բնակելի տան կառուցման աշխատանքային նախագիծ՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականում ամրագրված հողամասի սահմաններում: (ելնելով Հայաստանի Հանրապետության օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներից, առկա քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի դրույթներից կամ դրանց բացակայության դեպքում՝ կազմավորված (կազմավորվող) քաղաքաշինական միջավայրի պայմաններից, առաջարկություններ ճակատների ձևավորման, տանիքների, արտաքին դռների, պատուհանների համամասնությունների և գույնային լուծումների վերաբերյալ)
9.1. (*) Օբյեկտի հենավորությունը կարմիր գծից (մետր)	-----
9.2. (*) հենավորությունը հարևան հողակտորներից (օբյեկտներից) (մետր)	-----
9.3. Թույլատրելի բարձրությունը (մետր)	Բնակելի տունը նախատեսել մինչև երկու հարկանի՝ հնարավոր է նկուղային հարկով: Առավելագույն բարձրությունը նախատեսել տարածքի ստորին հատակագծային նիշից մինչև 9.0 մ:
(սահմանային հարկայնության բարձրությունը գերազանցող շենքերի և շինությունների նախագծման դեպքում՝ ՀՀՇՆ II-6.02-2006 «Մեյմակայուն շինարարություն. Նախագծման նորմեր» շինարարական նորմերով սահմանված պահանջների ապահովում (հատուկ հաշվարկային մեթոդներ, սեյսմակայունության բարձրացման միջոցառումներ և այլն))	
9.4. Կառուցապատման խտության գործակիցը	----- (կառուցի (կառույցների) ընդհանուր մակերեսի հարաբերությունը հողամասի մակերեսին)
9.5. Կառուցապատման տոկոսը	Մինչև 60% (կառուցապատվող (անփյունի) տարածքի հարաբերությունը հողամասի մակերեսին՝ տոկոսներով) (%)
9.6. Կանաչապատման տոկոսը	40% և ավելի: (կանաչապատ տարածքի հարաբերությունը հողամասի մակերեսին՝ տոկոսներով) (%)

9.7. այլ պահանջներ

- Նախագծով հնարավոր է նախատեսել բնակելի տան կառուցում:
- Ջրահեռացումը կազմակերպել՝ բացառելով անձրևաջրերի հոսքը դեպի հարևան հողամասեր:
- Ապահովել ՀՀՇՆ 30-01-2023թ. «Քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերը հաստատելու և ՀՀ քաղաքաշինության նախարարի 14.10.2014թ. հ.263-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին 22.05.2023թ. հ. 04-Ն հրամանով սահմանված (կետեր 126, 127 և գլուխ XXVII «Հակահրդեհային պահանջներ») պահանջները:
- Տարածքում հնարավոր է նախագծել օժանդակ շինություններ, ճարտարապետական և բարեկարգման փոքր ձևեր:
- Հասակագծային լուծումները մշակել համաձայն պատվիրատուի առաջադրանքի հաշվի առնելով նորմատիվային պահանջները:

10. Հողամասում գտնվող շենքերի և շինությունների քանդումն կամ տեղափոխումն (ապամոնտաժման) պայմանները և աշխատանքների հերթականությունը

11. Մտորգեմտյա, կիսանկողի և առաջին հարկերի տարածքների օգտագործման պայմանները

12. (*) Ինժեներական ցանցեր և սարքավորումներ	Պահանջներ գոյություն ունեցող և նախագծվող ենթակառուցվածքների ու ցանցերի նկատմամբ
12.1. (*) ջրամատակարարում, կոյուղի, տաք ջրամատակարարում	(համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների)
12.2. (*) էլեկտրամատակարարում	(համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների)
12.3. (*) գազամատակարարում	(համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների)
12.4. (*) էլեկտրոնային հաղորդակցության մատչելի ապահովում (ներառյալ դիտահորը) տեղադրվող	(համաձայն ՀՀ կառավարության 19 մարտի 2015 թվականի N 596-Ն որոշման N 1 հավելվածի 57-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված ելակետային տվյալների)
12.5. բույլ հոսանքներ	
12.6. աղբահանություն	

13. Տարածքի ինժեներական մախապատրաստում **Կազմակերպել տարածքի ջրահեռացում:**  
(ռեյինի կազմակերպման, ջրահեռացման, ինժեներական պաշտպանության միջոցառումները)

14. Բարեկարգում **Կառուցապատումից ազատ տարածքը բարեկարգել, հնարավոր է պարսպապատել:**  
(լանդշաֆտային պլանավորման, պահանջները, կանաչապատում, ճարտարապետական փոքր ձևեր, ցանկապատում, գովազդ և այլն)

15. Շինարարական նյութեր **Երկաթբետոն, մետաղ, սրբատաշ և կոպտատաշ քարե շար, բարձրորակ սվառ, երեսապատման բարձրորակ նյութեր:**  
(շինարարական նյութերի օգտագործման առաջարկությունները տանիքների, ճակատների լուծումների, արտաքին դռների, պատուհանների վերաբերյալ)

16. Պաշտպանական կառույցներ (արտակարգ իրավիճակներում մարդկանց օբյեկտների պաշտպանության միջոցառումները)

17. Հակահրդեհային պահանջներ (հակահրդեհային անվտանգության ապահովման միջոցառումները)

18. Հաշմանդամների և բնակչության սակավաշարժ խմբերի պաշտպանության միջոցառումներ

19. Շրջակա միջավայրի պահպանում  
(շրջակա միջավայր վտանգավոր ազդեցությունից բացառելու միջոցառումները)  
20. Շինարարության կազմակերպում **Մշակել շինարարական աշխատանքների կազմակերպման նախագիծ՝ նկատի ունենալով ՀՀ կառավարության 12.04.2001թ. հ.286 որոշմամբ հաստատված կարգի 44-րդ կետի «ԺԲ» ենթակետի և 44.1 կետի պահանջները, ինչպես նաև՝ Երևան քաղաքի ավագանու 16.03.2012թ. հ. 405-Ն որոշմամբ սահմանված լրացուցիչ պայմանները:**  
(առաջարկություններ շինարարության հետ կապված անբարենպաստ ազդեցության բացառման, քաղաքային տնտեսության և տրանսպորտի անխափան աշխատանքի ապահովման վերաբերյալ)

21. Առաջադրանքի գործողության ժամկետը և նախագծի մշակման փուլերը **Մեկ տարի:**  
(Նշվում են առաջադրանքի գործողության ժամկետը և նախագծի մշակման փուլերը)

Լ Ը Ա Յ Ո Ի Յ Ի Զ Պ Ա Յ Մ Ա Ն Ն Ե Ը Ը

22. Նախագծային փաստաթղթերի փորձաքննությանը ներկայացվող պահանջներ **ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման հավելված N 2. նախագծող կազմակերպության երաշխավորագիրը**  
(Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված փորձաքննության տեսակը կամ նախագծողի երաշխավորագիրը՝ հղում կատարելով համապատասխան իրավական ակտին)

23. Միջանկյալ համաձայնեցում **Անհրաժեշտության պարագայում համաձայնեցում Երևանի քաղաքապետի հետ:**  
(իրավասու մարմնի կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում՝ շահագրգիռ մարմինների հետ էքսպլիցիտ նախագծի նախնական համաձայնեցում, նշվում է նաև առաջադրանքի փոփոխման հնարավորությունը՝ ՀՀ կառավարության 19 մարտի 2015 թվականի N 596-Ն որոշման N 1 հավելվածի 87-րդ կետով նախատեսված դեպքում)

24. Հասարակական քննարկումները (Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով)

25. Համաձայնեցումներ **• Համաձայնեցում Երևանի քաղաքապետի հետ:  
• Մինչև նախագծային աշխատանքները սկսելը առկա ինժեներական ենթակառուցվածքի տեղափոխման պայմանների վերաբերյալ համաձայնություն ձեռք բերել տվյալ ենթակառուցվածքի սեփականատիրոջ (օգտագործողի) հետ:**  
(նշվում են տվյալ օբյեկտի համաձայնեցման օրենքով սահմանված պահանջները՝ իտիարձանների ու բնության պահպանության և այլ լիազորված մարմինների հետ, ինչպես նաև ՀՀ կառավարության 19 մարտի 2015 թվականի N 596-Ն որոշման N 1 հավելվածի 56-րդ կետով սահմանված դեպքերում)՝ ինժեներական ենթակառուցվածքի սեփականատիրոջ (օգտագործողի) հետ)

26. Փոստային բաժանորդային պահարանների տեղադրում

27. Այլ պայմաններ **Նախագծի կազմը և բովանդակությունը համապատասխանեցնել ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի նախագահի 11.09.2017թ. «Բնակելի, հասարակական, արտադրական շենքերի և շինությունների նախագծային փաստաթղթերի կազմը և բովանդակությունը սահմանող կանոնները և ՀՀ քաղաքաշինության նախարարի 29.11.2006թ. հ.273-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» հ.128-Ն հրամանով հաստատված դրույթներին:**

**ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ** **ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ**